

## ՄԱՐՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՓԵՐՍՅԱՆ ԲԱԻԶՄԵՆՔԻ ԵՒ ԻՐ ԳՈՅՄԱԹԵՆ  
ԽՐԳՐԱԶԳՐ

Ինչպէս յայտնի է, սուրբ Տրդատի յաջորդների պատմութիւնը մինչեւ Արշակունեաց թագաւորութեան բաժանումը Արշակ եւ Խոսրով թագաւորների ժամանակ մեզ աննշեղ են երկու սոհմային պատմագիրները. փաւստոս Բիւզանդացի եւ Մովսէս Խորենացի. (խոր. Պատմ., Հայոց Մեծաց, Գ, ք—խբ)։ Ի՞նչպէս մարդ ապշում է, երբ այս երկու պատմագիրներին համեմատում է միեանց հետ. մի կողմից բառացի ակն յայտնի նմանութիւններն, իսկ միւս կողմից հսկայական տարբերութիւններ, անհամաձայնութիւններ եւ հակասութիւններ։ Պէտք է փորձել այս երկու սոհմային պատմագիրներին միեանց հետ համեմատելով, նոցա մէջ եղած առնչութիւնը հաստատելու, եւ բացատրելու նոցա մէջ գոյութիւն ունեցող հակասութեանց պատճառները։ Առանց այս աշխատանքի անկարելի է Տրդատի եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչի յաջորդների պատմութիւնը գրել։ Հայ բանասէրները մինչեւ այսօր խուսափել են այս գործից, թերեւս վախենալով այն ծանրակշիռ հետեւանքներից, որոնք այս համեմատութիւնից պէտք է առնանային<sup>1</sup>։ Մենք այսօր ձեռնարկելով մասնաւորապէս այս գործին, կը խօսիք Ա. Խոսրով Կոտակի եւ Տիրանի թագաւորութեան, սուրբ Վրժանիսի եւ սուրբ Յուսկան կաթողիկոսութեան մասին. (փաւստոս, Գ, ք—խա == խորենացի, Գ, ք—ժէ), Բ. Արշակի եւ Պապի թագաւորութեան եւ սուրբ Ներսիսի կաթողիկոսութեան մասին. (փաւստոս, Գ, ա—ւ, լք == խորենացի, Գ, ժբ—լծ)։ եւ Գ. Պապի եւ սուրբ Ներսիսի յաջորդների մասին. (փաւստոս, Ե, լք—Ձ, ժգ == խորենացի, Գ, խ—խբ)։

## Ա.

Խօսելով Խոսրով Կոտակի եւ Տիրանի թագաւորութեան մասին, մենք չենք կարող անուշադիր թողնել այն ժամանակագրական տարբերութիւնները, որոնք նկատուում են Մովսէս Խորենացու եւ փաւստոսի մէջ։ Փաւստոսն իսկապէս ժամանակագրութիւն չունի։ Նա չէ ասում, թէ այս թագաւորը կամ այս կաթողիկոսն երբ գահ բարձրացաւ եւ քանի տարի իւր

իշխանութիւնը վարեց։ Ընդհակառակն Մովսէս Խորենացի միշտ որոշում է Հայոց թագաւորների եւ կաթողիկոսների ինչպէս գահակալութեան, նոյնպէս էլ իշխանութեան ժամանակը։ Նա միշտ յիշում է, թէ այս Հայոց թագաւորը Հռոմայեցոց կայսեր իշխանութեան որ տարին գահ բարձրացաւ եւ քանի տարի գահակալեց։ Նոյնպէս Հայոց կաթողիկոսների մասին միշտ յիշում է, թէ նոքա իրենց ժամանակակից Հայոց թագաւորի որ տարին գահ բարձրացան, քանի տարի վարեցին իրենց իշխանութիւնն եւ երբ մեռան։ Ժամանակագրական այս տեսակ ճշտապահութիւնը զարմանալի չէ մի պատմագրի կողմից, որն ասում է. «Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան» (խոր. Բ, ձբ)։ Ի հարկէ ուղղորդին ուրիշ հարց է, թէ արդեօք Խորենացու այսպիսի մանրամասն եւ խնամքով կազմած ժամանակագրութիւնն ինչն ըստ ինքեան ճշմարիտ է թէ ոչ։ Ահա լինել թէ շինեալ հարցը։

Արդ, խորենացին Բ, ձգ ասում է, որ ինքը «մանրախուզի քննել» գտել է Տրդատի թագաւորին<sup>2</sup> «յերբորդ ամի Դիոկղետիանոսի», իսկ Բ, ղբ Տրդատի մահը պատմելով, ասում է, որ նա «թագաւորեաց ամբ յիսուն եւ վեց»։ Որովհետեւ Դիոկղետիանոս կայսր էր 284—305 թուականը, ուստի, ըստ Խորենացու՝ Տրդատաւ պէտք է թագաւորած լինի 287—343 թուականը։ Խոր. Գ, ք Տրդատի որդու եւ յաջորդի Խոսրով Կոտակի համար ասում է, որ նա թագաւորել է («յերբորդ ամի Ուրմզդի Պարսից արքայի» եւ) «յուժերորդ ամի ինքնակալութեան Կատանդայ», եւ Գ, ժ նորան ասելու է 9ամեայ թագաւորութիւն։ Որովհետեւ Կատանդիոսը, Կատանդիանոս Մեծի որդին, կայսր էր 337—61 թուականը, ուստի ըստ Խորենացու՝ Խոսրով Կոտակը թագաւորած պէտք է լինի 345—54 թուականը։ Ինչպէս այս հաշուից պարզ երեւում է, Խորենացին Տրդատի մահից մինչեւ Խոսրովի գահ բարձրանալն 2ամեայ դատարկ ժամանակամիջոց (interregnum) է սահմանում (343—45)։ Այս անուշադիր թեման ժամանակամիջոցն է (ա՛նա Խորենացի, Գ, խ—է) որի մասին յետոյ մանրամասնօրէն պէտք է խօսիք։ Խորեն. Գ, ժ ա խոս-

1 Որովհետեւ Ուրմզդը թագաւորած էր 303—309 թուականը, ասում ոչ նորա թագաւորութեան 2րդ տարին (= 305) համապատասխան է Կատանդիոսի 8րդ տարուն (= 345), եւ ոչ էլ Խոսրովի կարգը է 305 թուին թագաւորած լինել։ Գորա համար մենք մեր գլխաւանդ պատմաբանի այս անհամարին խօսքերը փակագծերի մէջ դրելք։

2 Բայց ի Հ. Գալիլէանից, Տիեզ. Պատմ., Վիեննա, 1852, Բ, էջ 483, 487 եւ պատմութեան ընթացքում մշ։

րովի որդուն եւ յաջորդին, Տիրանին թագաւորեցնում եւ "յեւթն եւ ի տասներորդի ամի ինքնակալութեանն յոստանդեալ", եւ Գ. ժէ նորա տալին է 11 ամեայ թագաւորութիւն, ուրիշն 354—65: Սորանով Մ. խորենացին վաւարում է միանգամայն հետեւողաբան (consequent) եւ գիտակցութեամբ: Եւ իբրաւ նա Գ. ժգ—ժէ Տիրանին ժամանակակից է ներկայացնում Բուլխանա Ռ. յաջորդին (361—63):

Այժմ տեսնենք խորենացու ժամանակագրութիւնը Հայոց կաթողիկոսներ համար: Նա Բ. զաւար Գրիգոր լուսաւորէ մասին ստում է. "վասն որոյ յիսկզբան քահանայանալայնորա, յեւթն եւ ի տասներորդ ամէն թագաւորութեանն Տրդատայ մինչեւ ցլխոսուն եւ վեց ամէն նորին... Համարեալ թուին ամբ երեսուն", որից հետեւում է, որ սուրբ Գրիգոր լուսաւորիչը կաթողիկոս էր 304—34 թիւը: Այս գլխում խորենացին սուրբ Արիստակիսին, սուրբ Գրիգորի որդուն եւ յաջորդին, տալին է 17 ամեայ կաթողիկոսութիւն, "ի քառասուն եւ յեւթներորդ ամէն Տրդատայ մինչեւ ցլխոսուն եւ երրորդ ամէն նորին", այսինքն 334—40 թուականը: Իսկ սուրբ Վլթմանիսին կաթողիկոսացնում է "ի յիսուն եւ ի չորրորդ ամէն Տրդատայ եւ անգրո" եւ Գ. ժաւ ստում է. "յես լնլայ Տնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վլթմայ, փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ, ի նշուէս ձիւղ, գիտացաբար եւ հետեւողաբար է կազմել Մ. խորենացի իւր հաշիւը, ըստ որում Վլթմանսը կաթողիկոսացած պէտք է լինի 341—56 թուականը: Այս գլխում խորենացին սուրբ Բուսկանը կաթողիկոսացնում է "ի չորրորդ ամի Տիրանայ", եւ Գ. ժգ նորան տալին է 6 ամեայ կաթողիկոսութիւն, ուրեմն 351—63, որով է սուրբ Բուսկինը Բուլխանոսի ժամանակակից է դուրս գալիս: Այս վերին գլխում յիշուի Մ. խորենացի պատմում է սուրբ Բուսկան նահատակութիւնը Բուլխանոսի Ռ. յաջորդի գլխակար պատկերը խորտակելու պատճառաւ: Այս բոլորից անկապանելի կերպով հետեւում է, որ խորենացին մեզ Հայոց կաթողիկոսների համար մի ժամանակագրութիւն է ներկայացնում, որ կազման է կատարելով գիտակցութեամբ եւ միանգամայն ազատ է ներքին հակասութիւններից:

Այժմ գտնեք գլխաւոր հարցին եւ տեսնենք, արդեւք ուղիղ է Մ. խորենացու տուած այս ժամանակագրութիւնը, թէ ոչ: Բարեբախտաբար սուրբ Տրդատի յաջորդների մասին բաց

ի տոհմային պատմագիրներից (Փաւստոսից եւ խորենացուց) խոսում են նաեւ արտաքին ճշմարտախոս պատմագիրներ, որոց համեմատութեամբ մեզ միշտ է տրուում, ստույգ եւ տոհմային պատմագիրների պատմածք: Այս նկատմամբ մեզ համար անգնահատելի են Ամմիանոս Մարցիկիսոս հռակարոր հռոմեական պատմագրի առած տեղեկութիւնները: Սա պատմում է, որ երբ 360 թուին յոստանդիտ կայսրը Արեւելք եկաւ, որպէս զի անձամբ սկսէ Պարսից դէմ պատերազմը, կապագովկից ինտարիա քաղաքը հասնելով, "յոստանդիտն իւր մօտ հրախրելով Արշակ Հայոց թագաւորին եւ մեծ պատուով ընդունելով, նախադրուշացից եւ յորդորից, որպէսզի շարունակէ մնալ մեզ բարեկամ" եւ հետաւորներ: Որովհետեւ լուծ էր, թէ ինչպէս յանախ նորան Պարսից թագաւորը փորձում էր խաբելով, սպանալիքներով եւ նենգութեամբ, որպէս զի նա Հռոմայեցոց դաշնակցութիւնը թողաւ եւ իւր գիտաւորութեան համակերպելու: Իսկ նա շատ անգամ երգմամբ հաստատելով, որ աւելի պատարան կը լինի կեանքից զփոխ ելում քան իւր միտքը փոխելու, եւ վարձատրուելով այն իշխանների հետ միասին, որոնց իւր հետ բերել էր, դարձաւ իւր թագաւորութեան երկիրը, չվտանգանալով այսուհետեւ իւր խոստանալը մասամբ իւրից զրոյելու:

1 Այստեղ Ամմիանոսի խօսքը Պարսից եւ Հռոմայեցոց մէջ եղած շփոթումը (338—63) պատեհաբար մտնի է, որը վերին տարիները (358—63) իրեն սուր կերպարան ստացաւ: 358ին Հապուհ զոստանդիտ կայսրն ուղղեց մի թուլի, որի մէջ ի մէջ ուղեց ստում էր: "պէտք է Հայաստանը եւ Միջագետքը նորից ստանալ", որը իմ հուշիկ նենգութեամբ յափառակցելով (Ամմիանոս ԻԵ 5, 8): Երբ Պարսից եւ Հռոմայեցոց այս բանակցութիւնները ի զուր անցան, զոստանդիտ կայսրը, ինչպէս վերեւ յիշուեց, 360 թուին Արեւելք եկաւ, անձամբ ստանձնելու իւր զորքերի հրամանատարութիւնը: Այնպէս ժամանակակիցները, որ ոչ միայն Հռոմայեցոց կայսրն ախառում էր Հայոց Արշակ թագաւորին իրեն հետ կապուած պահել, ինչպէս ստում է Ամմիանոս, այլ եւ Հապուհ ամէն ինչը զորք էր դնում, Արշակին դաւաճել էր կողմը, ինչպէս ստում է Փաւստոս, Գ. իս. "յոստեք համալ ողորմ (Հապուհ թագաւոր Պարսից) եւ աղաղից զԱրշակ արքայ Հայոց" սիրով հաւաւ եւ փորձաւ կաւ ընդ նմա յուրիկ խաղաղութեան: Այսպէս ի մեծ վտանգ շտապեց իւր թագաւոր Պարսից ստեղծ ստեղծ յանգաղաք պատերազմացնել ի թագաւորաց անսի Բուլխան: Իսկ Արշակ արքայ Հայոց ոչինչ կամեւ անաւալ նմա, եւ ոչ հուպ ինչ լինել է նա, եւ յիշու (Իմ) յիշել գնապան եւ ոչինչ առջ պատարաւ ընտրեց, եւ ոչ հուպ ինչ եւ ծոտ լինել ի նա ըստին: Եւ զանման անգամ նորա ոչ կամեք լսել: Իսկ թագաւոր Պարսից ստեղծ ստեղծ յոր պատարաւ առ նա, առաքել գնապան: Եւ ինչ հապուհ կուր էր ընդ թագաւորան Բուլխան, ի նշուէս Փաւստոս եւ Ամմիանոս համակցնում էր լրացնում էր միմեանց:



ափով, Նիկեիտորոնի կամ Կալլինիկոնի եւ Կիր-  
կեսիոնի վերայով գէպ ի Տիգրան. իսկ երկրորդ  
մասը տուեց իւր Պրոկոպիոս եւ Սերաստիանոս  
զօրավարներին, «եւ նոցա հրամայեց որ որչափ  
կարելի է ընկերանան Արշակի եւ Նորա հետ  
կորուսաց, Մովսէս, չէր եւ Զարեանդ եւ այլ  
գաւառներէ մինչց փութով արշաւելով՝ Ասոր-  
իստան հասնին որ Տարսիսարու թեան ժամանակ  
իրեն օգնական ըլլան»<sup>1</sup>, Ամիմնոս յետոյ վկայում  
է, որ Արշակ Թուրանոսի հրամանը կատարել է:

Սակայն Հայոց թագաւորի այս դաշնա-  
կցութիւնը կորստաբեր հետեւեցներէ ունենում  
է Հայոց թագաւորի եւ Հայաստանի համար: Թու-  
րանոս թէպէտ Տիգրանի առաջ Հապոնհի ցոժերը  
խորտակում է, բայց հետեւեալ կուռում նե-  
տահար է ընում (26 յուլ. 363): Թուրանոսի  
յաջորդը Թովիանոս, թէպէտ քրիստոնէս եւ  
բարեպաշտ, սակայն անարի էր եւ ստիպուած  
Հապոնհի հետ կուռլ այն խաղաղութեան դա-  
շինքը, որը Հռոմայեցոյ տնուանը նախատինք  
էր բերում, որով նա հրաժարուեցաւ անգր-  
տիգրիսեան գաւառներէ (regiones Transgri-  
tanae), հիւսիսային Միդպետիքի եւ իւր դաշ-  
նակի, Արշակ Հայոց թագաւորին բարձիթողի  
տակ: Այս դաշնակցութեան պայմանները մեզ  
հաղորդում է Ամիմնոս ականաւան պատմա-  
գիրը ցուելով: «Նոյնպէս պահանջում էր թա-  
գաւորը (Հապոնհ) յամառութեամբ իրեն պայ-  
ման հաշտութեան, ինչպէս ինքն ստում էր, իւր  
կալուածքները, որոնք առաջ Մարսիմիանոսից  
յափշտակուել էին, այս է հինգ անգրտիգրի-  
սեան գաւառները. Արշանեմ (Arzanenam) Մովսէ,  
Զաբիզ (Zabdicena), ինչպէս եւ Հեր եւ Զարե-  
անդ (Rehimena) եւ կորդուք տանն եւ հինգ  
ամիրոցներով, որոնց թուում եւ Մովսէն ու  
Սենգարան... Բայց սոցանից աւելի կորստա-  
բերն եւ գարշելն այն էր, որ այս դաշնագրու-  
թիւնից յետոյ Արշակին, մեր մշտական եւ հաւ-  
ատարիմ դաշնակցին, Պարսից դէմ օգնութիւն  
չպէտ է հասցնուէր, եթէ նա արհամարհէր: Սո-  
րանով ուզում էր պատժել նորան այն ասպա-  
տակութիւնների համար որը նա արաւ Քրիստոնի  
կողմէրում ինքնակալի հրամանով, եւ դարձեալ  
որ կարող ընի այնու հետեւ ամենայն պատու-  
թեամբ արշաւել ի Հայան»<sup>2</sup>:

Կայ արդեօք յիշատակութիւն տոհմային  
պատմագիրների մէջ այս ազէտալի պատերազմի

մասին: Առ այժմ մենք խորենացու ցնդարանու-  
թիւնները մի կողմ թողնենք, եւ գիտենք փաս-  
տա Քիւլանդացուն: Սա դր, իս յիշում է Թու-  
րանոսի կոած վերոյիշեալ գաշինքը կէտ առ  
կէտ: «Իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թա-  
գաւորացն Թուանց եւ ի մէջ թագաւորի Պարսից  
Հապոնհ, ուխտից նամակ գրեալ եւ կընեալ  
այոր թագաւորին Թուանց թագաւորին Պարսից,  
եւ գրեալ էր յախտից նամակին այսպէս. «Ետու  
քեզ, ասէ, զՆիսին (Մովսիս = Nisibis) քա-  
ղաք, որ է յԱրուեստանի, եւ զՄիդպետոս Ասոր-  
ուոց, եւ միջնաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ,  
ասէ, թէ կարացես յաղթել նոցա եւ արկանել  
ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա:  
Արգ ի նեղ ուրեմն անկեալ թագաւորն Թուանց,  
եւ ի նեղին վշտի՝ զայս ձեւ օրինակի բանիցն  
կընէր մարհակ, եւ այոր թագաւորն Պարսից,  
եւ ապա ճողղպրէր ի նմանէ»<sup>3</sup>:

Որ այստեղ յիշուած «Թուանց թագաւ-  
որը» Թովիանոսն է, գորտ մասին ոչ մի կականած  
չէ կարող ընել: Ուրեմն ըստ միաբերան վկայու-  
թեան փաստաստի, Ամիմնոսի, Ամնասիոսի եւ  
Սողոմոնոսի՝ Արշակ Տիրանի որդին ժամանակա-  
կից է եղել ոչ միայն Թովիանոսին եւ Թուրանոսին,  
այլ եւ կոստանդինոսի՝<sup>4</sup> Եւ որովհետեւ Տիրանն,  
սուրբ Թուսկան սպանողը արդէն Թուրանոսից  
շատ առաջ գերեզման էր մտել, պարզ է, որ  
Թուսիկ կամ թողկոսը չէ եղել ժամանակակից  
Թուրանոսին: Այս բոլորից յետոյ ինչպէս կա-  
րելի է հաստատել խորենացուն, եւ Արշակի եւ  
Ներսիսի փոխանակ՝ Թուրանոսին ժամանակակից  
համարել Տիրանին եւ Թուսկանը: Մենք դեռ  
յետոյ պէտք է ցոյց տանք այն անտեղութիւն-  
ներն, որ խորենացու պատմութեան այս մասը  
պարունակում է, որն արդէն վաղուց «Հապար-  
եւ մի գիշեր» հէթիամոնիի շարք է դար-  
սուած:<sup>5</sup>

Սորանով մենք այս ժամանակագրական  
հարցը դեռ սպառուած չենք համարում: Դեռ  
պէտք է բացատրել, թէ ինչ շարժառիթներից  
զրուած խորենացին Տիրանին եւ սուրբ Թու-  
կանը ժամանակակից է նշանակել Թուրանոսին:  
Այս կարեւոր է մանաւանդ այն պատճառաւ, որ

<sup>1</sup> Պաթմընիս եւ Մարգարա (իւր Նոր լայն տեսակ  
Untersuchungen über die Geschichte Erans) Արշակի  
գահակալութեան հաւանական թվականը համարու է մ. թ. 350:

<sup>2</sup> Մանու. Նանե. Պաթմընիս, Տիգրեանական պատմ., Բ. 497, Nöldeke, Geschichte der Sassaniden (Թարգմ.), «Արա-  
րատում», 1895 տպու. էր. 838), Gelter, Die Anfänge der  
armenischen Kirche, p. 122, 2. Պարագայեան եւ այլք:

<sup>3</sup> Ամիմնոս, Rerum gestarum, I XXIII, 3, 5:

<sup>4</sup> Ամիմնոս, ibid. XXV, 7, 9-12:

նայելով այն մահացու հարուածներին, որ պատմական քննադատութիւնը տուել է խորե-նացու հեղինակութեանն, այսօր եւս մի շարք բանասերներ գեռ պաշտպան են հանդիսանում նորա պատմութեան վաւերականութեանը։ Զպէտք է մոռանալ, որ երբ մի ամիս առաջ ձայն եկաւ, թէ Մարաբասի պատմութիւնը գտնուել է, «Բազմալիպը» մեծ յաղմանակով շտապեց հրատարակել այդ լուրը, խորենացու պատմութիւնը քննադատողներին անուանելով «խճողներ»։ Բայց բռնից դուրս է դալիս (տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1897 յունբ.), որ Մարաբասի նորագիտ գիրքը ծառայում է իրրեւ մի այլ զօրեղ ապացոյց խորենացու պատմութեան անվաւերականութեան։

Արդ նախ պէտք է նկատել, որ խորենացին ոչ մի գրաւոր աղբիւր չէր կարող գտնել, որի մէջ Տիրանն եւ սուրբ Գուսիկը ժամանակակից լինէին Նշանակուած Գուսիկնոսին։ Այս տեսակ անկարելիութիւն եւ անտեղութիւն ոչ մի գրաւոր աղբիւր չէր կարող պարունակել։ Էլ չենք ասում, որ խորենացին իւր Գ. գրքի յառաքանում ոչ մի աղբիւր չէ յիշում, այլ խոստանում է լոկ յիշողութեան վրայ հիմնուելով՝ Տրգատի յաջորդների պատմութիւնը պատմել։ Որ ինչ առ մերով ժամանակաւ եղեալ կամ դոյշմ ինչ (!) Տեղի, ասում է նա իւր Մեկե-նասին, «զրուցեցիք բեզ անախի (!) երրորդ անունով գիրս, որ ինչ յեա սրբոյն Տրգատայ մինչեւ ի սպառել Արշակունեաց ազգին ի թա-գաւորութենէ, եւ զաւակի սրբոյն Գրիգորի ի քահանայութենէ»։ Ի զուր կը լինէր նաեւ ասել, իրր թէ խորենացին իւր պատմութեան այս մասը քաղած լինէր ժողովրդական աւանդութիւններից եւ այս կերպով մոլորութեան մէջ ընկած։ Ինչպէս մենք նորա ժամանակա-գրութեան մէջ տեսնում, ժողովրդական աւանդութեան հետք անգամ էլ զարդանալուած նորա մէջ, այլ ամեն բան գիտաբնութեամբ չա-փած եւ կշռած է։ Ուրեմն ինչո՞ք ստիպուած խորենացին այսպիսի անկարելի ժամանակագրու-թիւն է հնարում։

Մեր կարծիքով խորենացին հետեւեալ տեղեկութիւնք առաջնորդուելով հնարել է այս։ Նա Փաւստոսի պատմութիւնից (Գ. ԺԲ) գիտէր սուրբ Գուսիկն սպանութիւնը Տիրան թագաւորի հրամանով։ Միւս կողմից էլ նորան արտաքին մատենագիրներից յայտնի էր Գուսիկնոս ուրացող կայսեր Դեմաւիդը պառլե-նէի պատմութիւնը, որի համար բազմաթիւ

քրիստոնեաներ նահատակուել էին։<sup>1</sup> Արդ մեր զգուսնալ պատմաբանը ցանկանալով ցոյց տալ, որ սուրբ Գուսիկն ոչ թէ մեռել է հասարակ մահով, այլ իրրեւ քաջ պաշտպան եկեղեցւոյ, անվհեբ զինուոր Գրիգորի արորելով Գու-սիկնոսի դիւանկար պատկերը, նահատակուել է, սուրբ Գուսիկն սպանութիւնը կապում է Գուսիկնոսի պատկերների պատմութեան հետ, որով եւ Տիրանն եւ Գուսիկը ժամանակակից են գուրս եկել Գուսիկնոսին։ Ահա մի նոր ա-պացոյց մեր զառամեալ պատմաբանի անարեւ-իպիւնութեան եւ այն ողորմելի հասկացողութեան մասին, որ նա ունի պատմութեան վերայ։

Բայց որ խորենացին Գուսիկն նահատակութեան պատմութիւնը վերցրել է Փաւստոսի վերոյիշեալ գլխից, այդ եւս կարող ենք ա-պացուցանել։ Մենք առաջ ենք բերում երկու պատմագիրների խօսքերն եւս, որպէս զի ըն-թերցողը տեսնէ նոցա մէջ տիրող անխալտի նմանութիւնները։

Փաւստոս, Դ, 18։

Խորենացի, Գ, 14։

Իսկ թագաւորն Տիրան, եւ այլ մեծամեծ առաջա-նին նախորդացն, կամ աշխարհն ամենայն պիտի ըստ Աստուծոյ կամայն վարս, յանն առեալ իմաստուն ինչ ցանցալով լինէին։ Բան-գի զամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանն

Արդ հասեալ Տիրանայ ի Գառառն Երեւոյ, յիւ-րում ազգականն ինչչնայն կամայն կանչելով զպառ-կերն։ Չոր յաջապակալ սրբոյ Գուսիկն, էհան ի ձեռալ տարայն. եւ ընկի-ցեալ յերկր, կոխեալ մանրեաց, զգացուցանելով

<sup>1</sup> Այս նկատմամբ տես Hergenröther, Kirchengesch. I, 316. Պաւստոսի կողմէրէ կողմէրէ խորենացին մանաւանդ նորոգումը յայտնի եղաւ, որ նա աշխատում էր քրիստոնեաներին իրրեւ ապաստանելու եւ իւրաքանչեւ հանդիսացնել։ Ինչպէս ասանելու համար կերպիւրներին թշնի են խառնում, այս-պէս էլ նա շատ էր կոչուելով մատուցանել յարգանաց միացնել մի անգամ խոստովանութիւն կեցի աստուածներէ եւ նոցա երկրպագութիւնը նշոյնացնել հռոմէական տէրու-թեան օրէնքների հետ։ Մասնաւոր այս գիրքը նորա քրիս-տութեան մէջ լինելու է Գրիգոր Նազիւզեացին. եւ արա-նով նա գործաւ օրինակ եւ զապախալ ապացոյց, երեսնուց նշոյնալ «աղատափա եւ համբերաստար» արամեացրուած օ-րէնագրիներ համար։ Ապաք պատկերների պէտք է կցուէին կուրքերի պատկերներ եւ քրիստոնեաները ուրիշած են իրրեւսիք ինչ ընթերէլ կամ յարգանք մատուցանել նոցա եւ այսպիսով հաւատարմաց երեւալ եւ կամ այդ մեթոքով, կոյսերը թշնամներ եւ նորա մեծութեան գէշ մեղանշողներ գուրս զալ։ Աւելի իսհակալ անմէրք նկատեցին այդ չարա-փա խորենութիւնն եւ իրրեց այս իսհակալութիւնը առա-ժեցին նոր ձեռներով, յայտնի կիսեցին եւ ազատու-թիւնից ջեկուելով, այս պատարակով, իրր թէ նոցա ար-համարհած լինէին կոյսերը, միջոյնաւորաց (ասում է Գրիգոր Նազիւզեացին), ըստ երկականութեան նշմարեալ կոյսեր եւ կրօնի համար նայրուելով վանագի էին երկարուում։ Սա-կայն ըստ անգիրք անմէրք բաւանցան այդ ուղիւնքի մէջ, որը միակեղան անվայել էր կոյսերը քարէր աստուծոյն եւ արդէն ըստ ինչեան բաւական էր Գուսիկնոսի անունն ընդ-միջոյ գատապարտելու։

ապահովելու՝ անխտիր ի հօգուտ զարեւն արգար ի տարադարձող գործէն եւ այլ Կէլ բազում... Այս արդ հաւաքող բնոյցիմացալ լինել երանելի հայրապետի Եղեմի... Հաւաքող լինելուն յանդիմանալիս Եղեմի հարկանելով... Եւ ինչի վրան ահի սաստիկ օրհնացն Տեառն՝ թշնամի համարեալ թուել արդ համապալ աղանձէն զգարձըն Բրիտանոսի, եւ հաւաքող ի սմանէ սուրբ բունին Աստուծոյ խոցանակ լինին: Եւ այս մարտ պատերազմի էր սարս հաւաքող ընդ անհնական յանդիմանալին զանաւոր աւուրս կենաց իւրոյ: Արեւելի օր մի յաւաքող տարեկան զիմաց զայ թաւաւորն Տիրան հանդիմանալով արդ արագանի մտաւ ինչ յիշելին: Իսկ նա ընդդէմ բարբառեալ ասել: Չես արժանի: Տիմ գտա, մի գար ի ներքս: Ասան որդ անգէն ի ներքս քարշէին զնա յիշեցէջն: Իրանեմ եղեալ ջարխուսեալ քաշանայադատն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Եղեմի: Կրտսեմ հիշեցեալ լինել: Չոր Բոլորի պայաններէն բոլոր Ինչոյն Ինչեւեղ բերդէն արտաք մեծ Դրուկաց հաւաքին: Ինչ Բոլորն ի գաւառն Դարանայացիք ի Բոլոր Թուրքուն, եւ անդ որին յետ բազում առաջ հանգեաւ, եւ եղաւ մտաւ Գրիգորի եւ ընդ հարաւոր:

զերին խորամանկութիւն: Արտաք սինչ անկողիք եղեալ Տիրան, քանիք երկուս ի Եղեմիստէ: զմտա անելով՝ մտաւն ինքեան իր գիտող թաւաւորական պատկերի: Եւ յաւելեալ ի բարբառն յարմարեան, զոր անել ընդ սրբոյ Եղեմիստէ, յարաւորական յանդիմանալին իւրոյ յանդիմանալ: Հրամայեց իւրոյ տակ Եղեմիստէ յիշել: Եւ Գրիգոր անգեաց զոյգին իսկ զմարմին օրոր Եղեմիստէ Բոլորն Դարանայացիք Եղեմիստէ Թուրքուն, որ Եղեմի յիշեցեալ զանաւորական ընդ:

ի գիւղն Թուրքուն,՝ անգեաց նախադատութիւնը: Փաւստոսի «Եղաւ մտա առ Գրիգորի, խոցեւոր խորենացին առանց նպատակի չէ բաց լնողը: Խորեն: Բ, զա կրկին արտադրել է այն ժողովրդական առասպելը, ըստ որում մեր առաջին բազմաթիւ հայրապետը սուրբն Գրիգոր իւր հօտից միանգամայն մոռացուած անշարունակեան մէջ է մեռնում: «Եւ ծանկեալ ամս բազումն աստուածային իմն գոյցն առեւտրութեամբ, իբրեւ զՄովսէս զայն ի հնուն (սեւ Երկրորդ Օրէնք, ԼԳ, 5—6), զի մի ի պաշտօն առցի ի դեռաւ: Հաւատ բարբառացն անգեաց. իսկ յորժամ սերտեալ իմենցան հաւատք կողմանցս այսոցիկ, չնէ յետ Բուրմա ժամանակաց յայանեցաւ ձեզ Եւսուրի ումեն Գառնիկ անուն կոչեցեցը, եւ բերեալ եղաւ ի գիւղն Թուրքուն նշխարը սրբոյն Գրիգորի: Արդ խորենացին կամենալով այս առասպելի նշանակութիւնն աննուաղ պահպանել, Փաւստոսի պատմութիւնը խորագրեալ է: Այսպէս Փաւստոս Գ, բ պատմում է, որ սուրբ Գրիգոր արդէն Վրթանիսի կամեղիկոսութիւնից առաջ լնողեան էր Թուրքանում, ապա Գ, ժա Վրթանիսի մահը պատմելով ասում է՝ «զուրկն Վրթանես... մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչեւ ի Գիւղն Թուրքուն ի Դարանայացիք գաւառն յաղորդէին: Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զուրս սուրբ զոսկրուն հոգեւորացեալն, խորենացին հետեւելով վերեւ յիշուած առասպելին եւ ցանկանալով ցոյց տալ, որ Վրթանիսի մահուան ժամանակ սուրբ Գրիգոր դեռ թաղուած չէր Թուրքանում, Գ, ժա ասում է: «Տօբեւ (զՎրթանես) հոգեւորացեալն ի Գիւղն Թուրքուն, իբրեւ մարգարէական ակամբ հայեցեալ, որ զին Բուրմա ժամանակաց եւ հօտն յայն տեղի հանգուցան նշխարը: Այս միտքը, այսինքն թէ մեռած մարդիկ եւս, ինչպէս Վրթանիսի մարմինը, մարգարէանալ կարող են, միշտ միտք է եւ հակապակ սուրբ Գրիգոր:

Նշեն կեղեկքն անում է խորենացին եւ սուրբ Եղեմիստէ թաղման ժամանակ: Դա «մտա առ Գրիգորի, խոցեւոր դուրս ձգելով, ուզում է ասել, որ սուրբ Եղեմիստէ թաղման ժամանակ եւս դեռ լուսաւորել նշխարները Թուրքուն չէին փոխադրուած:

(Էրեւան-Ինչի)

Յ. ՊԱՂԱՍԵԱՆ



Ինչպէս ընթերցողը տեսնում է, Փաւստոս Բրեւանդացու խոցեւոր կարծիք թելի նման անցնում են խորենացու այս պատմութեան միջով, ինչպէս վերեւի բառացի նմանութիւնները ցոյց տալին: Խորենացու պատմութիւնը է Փաւստոսի պատմութեան համառոտութեանը եւ թուրքանոսի պատկերների կեղծիքին: Եւսուր Լեւ եւս արժանի են բարբառութեան: Եւսուր Թուրքանը ծննել: Բայց նորա ծառաները աննուկ կամեղիկոսին պնչեալ են ծննում, որ կանխեցաւ պաշտօնեաները նորա մտապահ յանձնը զգալով, Թուրքան են տանում, ուր նա մի քանի օրից Լեւոյ մեռնում է սաստիկ ծննից: Խորենացին հնարելով Թուրքանոսի պատկերի տրուելը, Տիրանի հրամանն եւս սաստիկացնում է, ծննի հրամանը փոխում մահուան հրամանին: Երկրորդ պէտք է նկատել խորենացու «զմարմին սրբոյ Եղեմիստէ բարձեալ տարան առ հայր իւր